

Հ Ա Ն Գ Ի Ս Տ

Տ. ՎԱՐՈՒԺԱՆ Ծ. ՎՐԴ. ԳԱՊԱՌԱՃԵԱՆԻ

(1927 – 2004)

Ուրբաթ, 30 Ապրիլ 2004, ի Տէր հանգեալ Նրուսաղէմի Ս. Յակոբեանց Միաբանութեան երիցագոյն անդամներէն եւ Ամերիկայի Միացեալ Նահանգաց Արեւելեան Թեմի էվընսթըն ֆաղափի Ս. Յակոբ եկեղեցւոյ երկարամեայ հոգեւոր հովիւ Տ. Վարուժան Ծ. Վրդ. Գապառանեան, յետ երկարատեւ եւ անողոք հիւանդութեան:

Հայր Սուրբի Թաղման Տան կարգը տեղի ունեցաւ Ուրբաթ, 7 Մայիս 2004, երեկոյեան ժամը 7:30ին՝ էվընսթըն ֆաղափի Ս. Յակոբ եկեղեցւոյ մէջ (Շիֆակօ): Հանդիսապետն էր Գերշ. Տ. Նղիշէ Արք. Կիզիրեան: Ներկայ էին շրջանի եկեղեցականները, հոծ թիւով սգակիրներ եւ էվընսթըն ֆաղափ ոստիկաններ եւ հրշէջներ: (Հայր Վարուժան երկար տարիներ եղած է «քանակներէց»):

Շաբաթ, 8 Մայիս 2004, Ս. Պատարագը մատոյց Գերշ. Տ. Նղիշէ Արք. Կիզիրեան: «Ողջոյն»էն առաջ՝ Հայր Վարուժանի Վերջին Օծումը կատարեց Ամերիկայի Միացեալ Նահանգաց Արեւելեան Թեմի Առաջնորդ Գերշ. Տ. Խաժակ Արք. Պարսամեան:

Դամբանական խօսքէն առաջ, Առաջնորդ Սրբազան Հայրը կարդաց Ամենայն Հայոց Կաթողիկոս Տ. Տ. Գարեգին Բ.ի ցաւակցական նամակը:

Օրուան երգեցողութիւնը կատարեց շրջանի միացեալ դպրաց դասը՝ ղեկավարութեամբ խմբավար Խորէն Մէլիսանէնեանի:

Թեմակալ Առաջնորդ Գերշ. Տ. Խաժակ Արք. Պարսամեան շրջաբերականով մը հրահանգած է Թեմի բոլոր հոգեւոր հովիւներուն որպէս զի Կիրակի, Յունիս 12ին մասնաւոր Հոգեհանգստեան Պաշտօն կատարուի Վարուժան Ծ. Վրդ. Գապառանեանի վախճանման ֆառասունֆին առիթով:

«Յիշատակն արդարոյն օրհնութեամբ եղիցի. ամէն:»